# ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1988—1991)

Ե. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

*1988 թ. դեկտեմբերի 7-ին ժամը 11.40 րոպեին հանրապետության հյուսիսային շրջաններում տեղի ունեցավ վերջին հարյուրամյակների բնական ամենաուժեղ աղետը՝ 10,5 բալ ուժգնությամբ երկրաշարժը, որը վայրկյանների ընթացքում հողին հավասարեցրեց Սպիտակ, մասամբ նաև Լենինական, Կիրովական, Ստեփանավան քաղաքները, լրիվ ավերեց 59 գյուղ, մասնակի՝ մի քանի տասնյակ բնակավայրեր։ Գիտնականները այդ երկրաշարժը համարեցին կործանարար, որի էպիկենտրոնը գտնվում էր Սպիտակի շրջանի Շիրակամուտ (նախկին Նալբանդ) գյուղում և այն անվանեցին Սպիտակի երկրաշարժ։*

Աղյուսակ 1

**Երկրաշարժի գոտու բնակչության թվաքանակի փոփոխությունը. 1-ը հունվարի 1988 թ. առ 12-ը հունվարի 1989 թ.** *(ըստ համամիութենական մարդահամարի)**

| Շրջանի կամ քաղաքի անվանումը | Բնակ. թիվը առ 1.01.1988թ. հ. մարդ: գյուղական | քաղաքային | ընդամենը | Առկա բնակ. թիվը առ 12.01.1989թ. հ. մարդ: գյուղական | քաղաքային | ընդամենը | Շրջանի, քաղ. տարածքը, քառ. կմ | Բնակավայրերի թիվը | Գյուղական բնակչության խտությունը 1 քառ. կմ-ի վրա, մարդ | 1988 և 1989 թթ. բնակչ. թվի տարբ., հազ. մարդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ամասիա | 19,2 | — | 19,2 | 6,3 | — | 6,3 | 608 | 26 | 10.4 | —12,9 |
| Անի | 13,8 | 6,2 | 20, | 15,6 | 8,2 | 23,8 | 429 | 16 | 36,4 | 3,8 |
| Ապարան | 13,1 | 6,9 | 20,0 | 14,3 | 7,0 | 21,3 | 600 | 18 | 23,8 | 1,3 |
| Արագած | 14,0 | — | 14,0 | 13,5 | — | 13,5 | 382 | 22 | 38,2 | −0,5 |
| Արթիկ | 21,9 | 23,3 | 45,2 | 31,4 | 28,8 | 60,2 | 480 | 21 | 65 4 | 15,0 |
| Ախուրյան | 39,4 | — | 39,4 | 38,0 | — | 38,0 | 576 | 35 | 67,5 | 0,5 |
| Գուգարք | 30,9 | 0,4 | 31,3 | 20,2 | 0,4 | 20,6 | 775 | 18 | 26,1 | −10,7 |
| Ղուկասյան | 9,9 | — | 9,9 | 10,3 | — | 10,3 | 547 | 35 | 18,3 | 0,4 |
| Իջևան | 25,4 | 21,4 | 46,8 | 23,1 | 22,7 | 45,8 | 1332 | 21 | 17,3 | −1,0 |
| Կալինինո | 26,6 | 12,3 | 35,9 | 20,2 | 10,4 | 30,6 | 69 | 21 | 29,3 | −8,3 |
| Նոյեմբերյան | 21,9 | 8,0 | 29,9 | 25,2 | 8,8 | 34,0 | 538 | 18 | 46,8 | 4,1 |
| Սպիտակ | 28,4 | 18,5 | 46,9 | 8,4 | 3,6 | 12,0 | 549,2 | 20 | 15,4 | −34,9 |
| Ստեփանավան | 16,4 | 20,6 | 37,0 | 17,9 | 9,7 | 27,6 | 629 | 19 | 28,5 | −9,4 |
| Թալին | 24,0 | 11,3 | 35,3 | 26,7 | 13,2 | 39,9 | 1288 | 39 | 20,7 | 4,6 |
| Թումանյան | 25,0 | 33,5 | 58,5 | 28,3 | 33,8 | 62,6 | 1109 | 33 | 26,0 | 4,1 |
| Շամշադին | 23,9 | 10,2 | 34,1 | 24,4 | 10,4 | 34,8 | 824 | 15 | 29,6 | 0,7 |
| ք. Դիլիջան | 6,7 | 23,4 | 30,1 | 6,7 | 23,7 | 30,4 | 6 | 1 | — | 0,3 |
| ք. Կիրովական | — | 170,9 | 170,9 | — | 71,3 | 74,3 | 26 | 1 | — | −96,6 |
| ք. Լենինական | — | 230,0 | 230,0 | — | 120,0 | 120,0 | 36 | 1 | — | −110,0 |

* *Աղյուսակը կազմված է վիճակագրական նյութերի հիման վրա։ Խորհրդային Հայաստան, 15 մայիսի 1989 թ.։*

Աղետից տուժեցին արդյունաբերական, գյուղատնտեսական գրեթե բոլոր կառույցները, հաղորդակցության միջոցները, բնակելի շենքերը, խափանվեցին էլեկտրական էներգիայի, ջրի, գազի մատակարարումը, հեռախոսային ցանցը։ Եղան բազմահազար մարդկային զոհեր, 1200 երեխա երկկողմանի որբացավ, 19 հազար մարդ տարբեր աստիճանի խեղումներ և վնասվածքներ ստացավ։ Անօթևան բնակչության մի մասը տեղավորվեց վրաններում, ժամանակավոր տնակներում, անգամ՝ վթարային շենքերում, իսկ մի մասը էվակուացվեց հանրապետության մյուս շրջաններ և նրա սահմաններից դուրս։

Երկրաշարժի նյութական վնասները գնահատվեցին 13—14 միլիարդ ռուբլի։ Այդ աղետը ընդգրկեց հանրապետության տարածքի ավելի քան մեկ երրորդը (11,3 հազ. քառ. կմ), որտեղ տեղաբաշխված էին 9 քաղաք, 15 քաղաքատիպ ավան և 16 գյուղական շրջան՝ 370 բնակավայրերով, որտեղ մինչև երկրաշարժը ապրում էր 957,4 հազար մարդ, ընդ որում 596,5 հազարը քաղաքաբնակներ էին։ 1989 թ. հունվարի 12-ի մարդահամարի տվյալներով բնակչության թիվն իջավ 706,9 հազարի, այսինքն՝ 250,5 հազարով (20,6-ով պակասեց, մանրամասն տե՛ս աղ. 1)։

Երկրաշարժից 7 օր հետո՝ դեկտեմբերի 14-ին, Խորհրդային Միության և օտարերկրյա լրագրողների համար կազմակերպված ասուլիսում Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը նշեց, որ փլատակներից հանվել է մոտ 15 հազար դիակ։ Թե որքան է զոհվածների ընդհանուր թիվը, կարելի է դատել միայն ըստ հաշվարկների՝ հենվելով համաշխարհային փորձի վրա։ Դիտնականների հաշվարկները տալիս են հնարավոր մոտավոր թիվը՝ 40—45 հազար[1]։

Հայաստանի վիճակագրական հաղորդագրություններում ասված է, որ հանրապետության մարմինների ու տեղական իշխանությունների ներկայացուցիչները փրկարար աշխատանքների ընթացքում կատարում էին ինչպես փլատակներից հանվածների, այնպես էլ զոհվածների ամենօրյա հաշվառում։ Այդ եղանակով ստացված տվյալները ցույց են տալիս ավելի քան 25 հազար զոհ, այդ թվում՝ 670 ուսուցիչ, 197 բժիշկ, մի քանի հազար ինժեներ։ Իհարկե, զոհվածների թվի մեջ կարող են լինել որոշ անճշտություններ։ Բժշկական տեղեկությունների հիման վրա գրանցված երկրաշարժի զոհերի ընդհանուր թիվը մինչև 1989 թ. հուլիսի 1-ը եղել է 16895, ընդ որում Լենինական քաղաքում զոհվել են 10286 մարդ (քաղխորհրդի նախագահ Կ. Համբարձումյանը զրույցի ժամանակ նշեց, որ մինչև 1989 թ. հուլիսի 1-ը զոհերի ընդհանուր թիվը 13101 է, այսինքն՝ 2815-ով ավելի, քան հրապարակված թիվն է)։ Սպիտակ քաղաքում և համանուն շրջանում զոհվել են 5058, Կիրովական քաղաքում 683, Ախուրյանի շրջանում՝ 392 (շրջանային գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Պ. Մխոյանի տվյալներով՝ 485 կամ 93-ով ավելի), Ստեփանավան քաղաքում և համանուն շրջանում՝ 77, Գուգարքի շրջանում՝ 73 մարդ, աղետի գոտու մյուս շրջաններում ու քաղաքներում՝ 326 մարդ[2]։ Բացի այդ, աղետյալ գոտուց կազմակերպված էվակուացվել են 80 հազար մարդ և 80 հազարն էլ (գուցե և ավելի շատ) տեղափոխվել են սեփական նախաձեռնությամբ, ուրեմն միայն այդ ճանապարհով աղետյալ գոտուց դուրս են գնացել 160 հազար մարդ։ Եթե դրան գումարենք 7,5 հազար բնական մահերի, 8 հազար դրսից եկած շինարարների ու զոհվածների մոտավոր թիվը (25 հազ.), ապա ընդհանուր թիվը կկազմի 200,5 հազար մարդ։ № 1 աղյուսակից պարզվում է, որ աղետյալ գոտու բնակչության տարբերությունը երկրաշարժից հետո կազմել է 250,5 հազար, և եթե դրանից հանենք կազմակերպված էվակուացվածների, կամավոր մեկնածների, բնական մահացածների, տեղում աշխատող դրսեկ շինարարների և զոհվածների թիվը, ապա տարբերությունը կմնա 50 հազար։

---

1 Երեկոյան Երևան, 14. XII. 1988։

2 Խորհրդային Հայաստան, 21. VI. 1989։

Այդ տարբերության բացատրությունը տրված է ՀԽՍՀ վիճպետկոմի՝ Հայաստանի բնակչության ընդհանուր թվի վերաբերյալ (առ. 1. I. 1990) պաշտոնական օգտագործման համար հրապարակած գրքույկում, որտեղ բերված են 1989 թ. համամիութենական մարդահամարի տվյալները[3]։ Նշվում են նաև բնակչության թվաքանակի փոփոխությունների հաշվառման հետ կապված օբյեկտիվ դժվարությունները։ Կործանարար երկրաշարժը, իրադրության բարդացումը ԼՂԻՄ-ում հանգեցրին բնակչության ինտենսիվ տեղաշարժերի, ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, որը բացասաբար անդրադարձավ մարդահամարի արդյունքների վրա։ Լրացուցիչ դժվարություն առաջացրեց էվակուացվածների և փախստականների հաշվառումը։ Այսպես, մարդահամարի ընթացքում Ադրբեջանից Հայաստան էին եկել 200 հազար հայ փախստականներ, հանրապետությունից հեռացել էին մոտ 160 հազար ադրբեջանցի, իսկ ավելի քան 160 հազար մարդ աղետի գոտուց էվակուացվել էին։ Վերը նշված երևույթների պատճառով չի բացառվում հանրապետության տարածքում բնակչության զգալի թերհաշվառում, մանավանդ՝ աղետի գոտում:

Բարդ ու լարված պայմաններում աղետյալ գոտում զոհվածների, ինչպես նաև հանրապետությունից դուրս գնացածների ճիշտ հաշվառումը, անկասկած, թերի է։ Իհարկե, դա նույնպես հասկանալի է, որովհետև այդ օրերին հիմնական ուշադրությունն ուղղված էր փլատակներից կենդանի մնացած մարդկանց դուրս բերելուն։ Զոհվածների թվի թերի հաշվառմանը նպաստել է նաև ԶԱԳՍ-ի՝ բժշկական վկայականների ոչ լրիվ ձևակերպելու հանգամանքը։

Եթե հանրապետության ղեկավար օրգանները, Վիճպետկոմը ժամանակին ձեռնամուխ լինեին աղետի գոտում կրկնակի մարդահամար կատարելուն կամ տեղում 5—7 հոգուց բաղկացած հանձնաժողովներ ստեղծեին, ըստ բնակավայրերի պարզեին զոհվածների և հանրապետությունից էվակուացվածների թիվը, ապա այդ տարբերությունն այդքան մեծ չէր լինի։ Զոհվածների թվի ճշտումն անհրաժեշտ է ոչ միայն ներկա, այլև գալիք սերունդների համար։ Համեմատության համար ասենք, որ 1990 թ. սկզբներին Իրանում տեղի ունեցած 6—7 բալ ուժգնությամբ երկրաշարժի հետևանքով մարդկային զոհերի թիվը երեք անգամ գերազանցել է Հայաստանի զոհերի պաշտոնական թվին։

Բերենք բնակավայրերի բնակչության թվաքանակի փոփոխությունների վերաբերյալ տվյալները։ Այսպես, Ջաջուռ, Ջրառատ (Ախուրյանի շրջան), Ավշեն, Արագած, Ջամշլու, Սիփան (Արագածի շրջան), Մուլք, Նորաշեն (Ապարանի շրջան), Բաղում, Վահագնի, Դարպաս, Լերմոնտովո, Ֆիոլետովո (Գուգարքի շրջան), Ղուկասյան, Կրասար, Մուսայելյան, Սալուր, Բաշգյուղ, Լեռնագյուղ (Ղուկասյանի շրջան), Հագվի (Թումանյանի շրջան), Ջուջևան, Լճաձոր, Բագրատաշեն, Լալվար, Պտղավան, Ոսկեպար (Նոյեմբերյանի շրջան), Գյուլագարակ, Կիրովի (Ստեփանավանի շրջան), Այգեպար, Նավուր (Տաուշի շրջան) գյուղերի բնակչության թիվը պակասել է մինչև 25 %, 26—50 % պակասել է Ախուրյան, Մեծ Սարիար, Մուսայելյան, Շիրակ (Ախուրյանի շրջան), Ամասիա, Օքսյուզ, Ղարաբուլաղ (Ամասիայի շրջան), Գուգարք, Շահումյան (Գուգարքի շրջան), Նեղոց (Թումանյանի շրջան),

---

3 Երկրաշարժից տուժած 9 շրջաններում (Ամասիա, Ապարան, Արթիկ, Ախուրյան, Գուգարք, Ղուկասյան, Կալինինո, Սպիտակ, Ստեփանավան), ինչպես նաև Լենինական, Կիրովական, Դիլիջան, Սպիտակ, Ստեփանավան քաղաքներում մարդահամարը կատարվել է կրճատ ծրագրով, դրա հետևանքով մոտ 600 հազար մարդու վերաբերյալ չեն ստացվել անհրաժեշտ տեղեկություններ՝ ամուսնական վիճակի, ընտանեկան կազմի, գոյության միջոցների, բնակարանային պայմանների և այլ հարցերի մասին (տե՛ս 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Երևան, 1991, էջ 3)։

*Ղրզլղաղ, Կաքնառատ, Մեդովկա, Պրիվոլնայա, Սարատովկա (Կալինինոյի շրջան), Լեռնավան, Սարալանջ, Քարածոր (Սպիտակի շրջան), Հովածոր, Պուշկինո, Կույբիշև (Ստեփանավանի շրջան) գյուղերի բնակչությունը, 51—75 %՝ Ջաջուռի նրկաթգծին կից ավանը, Կասատ (Ախուրյանի շրջան), Հակկո, Կաքավածոր, Կարմրաշեն, Կաթնաղբյուր, Ներքին Սասնաշեն, Ծամաքասար (Թալինի շրջան), 76 և ավել %՝ Մայիսյան (Ախուրյանի շրջան), Դուզքենդ, Գյուլլիբուլաղ, Ջայբասար, Ծնիյոլ, Իբիշի, Ջիվիսլի, Մաղարաջուղ, Օխչիօղլի, Շուրաբադ, Թափաքյոյ (Ամասիայի շրջան), Արջուտ, Գյոզալդարա, Հայդարլի (Գուգարքի շրջան), Վերին Ախթալա, Այրում (Թումանյանի շրջան), Ղզղալա, Իգմանլու (Կալինինոյի շրջան), Ղուրսալի, Սարալանջ, Լեռնանցք, Նոմարան, Գեղասար (Սպիտակի շրջան) գյուղերի բնակչության թիվը։ Շուրջ կիսով չափ պակասել է Լենինական, Սպիտակ, Կիրովական քաղաքների բնակչությունը։*

*Կատարվել է և հակառակը. աղետի գոտու 203 գյուղերի բնակչությունն ավելացել է հետևյալ հարաբերությամբ. 112 գյուղերում բնակչության թիվը աճել է 25 %, 51 գյուղերում՝ 26—50 %, 25-ում՝ 51—75 %, իսկ 20-ում՝ 76 և ավել %։ Մնացած գյուղերում բնակչության թիվը գրեթե չի փոխվել (տե՛ս քարտեզ 2)։ (I բնակավայրի թ. II բնակչության թվաքանակ)*

**Աղյուսակ 2**

**Սպիտակի երկրաշարժի գոտու 8 շրջանների բնակելի և օժանդակ կառույցների ավերվածությունը տոկոսներով և նրանց բնակչության թիվը 1989 թ.***

| Շրջաններ | | 10 տոկոս | 20 տոկոս | 30 տոկոս | 40 տոկոս | 50 տոկոս | 60 տոկոս | 70 տոկոս | 80 տոկոս | 90—100 տոկոս | Չեն ավերվել | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ախուրյան | I | 3 | 3 | 4 | 2 | 5 | 4 | 1 | — | — | — | 22 |
| | II | 3607 | 7150 | 4407 | 1312 | 6950 | 3748 | 139 | | | | 27313 |
| Արագած | I | 7 | 6 | 7 | 1 | 1 | | | | | 2 | 24 |
| | I | 5508 | 1954 | 4696 | 631 | 304 | | | | | 420 | 14054 |
| Գուգարք | I | 5 | 1 | | 1 | 1 | 1 | 1 | 1 | | 3 | 14 |
| | II | 4782 | 412 | | 27 | 1080 | — | 154 | — | | 2630 | 9148 |
| Ղուկասյան | I | 5 | 1 | 2 | 1 | — | 3 | — | 1 | | 3 | 16 |
| | II | 4210 | 567 | 139 | 53 | — | 976 | — | 169 | | 274 | 6183 |
| Կալինինո | I | 2 | 2 | 2 | — | 1 | | | | | 13 | 20 |
| | II | 509 | 1009 | 401 | — | 192 | | | | | 17782 | 19963 |
| Սպիտակ | I | — | — | 1 | — | 2 | 2 | 2 | 11 | 2 | — | 20 |
| | II | — | — | 667 | — | 377 | 1220 | 1252 | 3658 | 1263 | — | 8407 |
| Ստեփանավ. | I | 2 | 5 | 4 | 1 | 1 | — | 1 | — | — | 3 | 17 |
| | II | 3872 | 4545 | 3177 | 1471 | 418 | — | 810 | | | 2453 | 16751 |
| Թումանյան | I | | | | | 1 | | | | | 11 | 12 |
| | I | | | | | 5059 | | | | | 10053 | 15112 |
| Ընդամենը | I | 24 | 18 | 20 | 6 | 12 | 10 | 5 | 13 | 2 | 35 | 145 |
| | II | 22848 | 15467 | 13069 | 3694 | 14360 | 5944 | 2255 | 3777 | 1263 | 33689 | 116926 |

* % գյուղերի ավերված տների թիվն է։ Այսպես, % նշանակում է 100 տնից 10-ը փլվել է։

Երկրաշարժից 14 օր հետո՝ դեկտեմբերի 21—22-ին ԽՍՀՄ ԳԱ Աշխարհագրության ինստիտուտի և հանրապետության ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի մասնագետների համատեղ ուժերով, ուղղաթիռի միջոցով, կատարվել է աղետի գոտու խիստ տուժած 8 շրջանների (Ախուրյան, Արագած, Գուգարք, Ղուկասյան, Կալինինո, Սպիտակ, Ստեփանավան և Թումանյան) գյուղերի բնակելի և օժանդակ կառույցների ավերվածության աստիճանի ավիալուսանկարում։

Հետազոտությունները պարզել են, որ նկարահանված 138 գյուղերից 24-ի բնակելի տները և օժանդակ շենքերը քանդվել են (ավերվել) 10 %. 18 գյուղերինը՝ 20, 20-ինը՝ 30, 6-ինը՝ 40, 12-ինը՝ 50, 15-ինը՝ 60—70, 12-ինը՝ 80, 2-ինը՝ 90—100 %, իսկ 29 գյուղ մնացել է կանգուն (մանրամասն տե՛ս աղ. 2)։

Պարզվում է, որ երկրաշարժից ուժեղ տուժել են էպիկենտրոնի և նրան հարակից Սպիտակի, Ախուրյանի, Գուգարքի և Ղուկասյանի շրջանների գյուղերի բնակելի կառույցները, հասարակական շենքերը և անասնապահական ֆերմաները։ 60—100 % ավերվել են Քեթի, Այգաբաց, Կրաշեն (Ախուրյանի շրջան), Վերին Քիլիսա, Գյոզալդարա (Գուգարք), Ջորաշեն, Սարապատ, Լեռնագյուղ, Ցողամարգ, Փոքր Սարիար, Կաքավասար, Արփենի (Ղուկասյան), Սարալ, Ղուրսալի, Արևաշող, Սարամեջ, Շենավան, Գոգարան, Սարահարթ, Շիրակամուտ, Գեղասար, Ջրաշեն, Լեռնավան. Սարալանջ, Հարթագյուղ, Ղալթաղչի, Մեծ Պարնի, Ծաղկաբեր, Խնկոյան (Սպիտակ) գյուղերի բնակելի տները։ Իհարկե, ամենաուժեղ հարվածը հասել է Սպիտակի շրջանի գյուղերին (տե՛ս քարտեզ 2)։

Լուսանկարված շրջանների գյուղերում մինչև երկրաշարժը ապրում էին 132,4 հազար մարդ, իսկ աղետից հետո 117 հազար կամ 15,0 հազարով պակաս։ Առանձին շրջաններում տարբերությունները ավելի մեծ են։ Օրինակ, Սպիտակի շրջանում մինչև երկրաշարժը ապրում էին 29,2 հազար մարդ, աղետից հետո մնաց 8,3 հազար կամ 12,4 հազարով պակաս։ Գուգարքի շրջանում բնակչության թիվը պակասել է 7,6 հազարով, Ախուրյանում՝ 1,7 հազարով։ Բայց տեղի է ունեցել և հակառակը։ Տուժած շրջանների բնակիչների մի մասը տեղափոխվել է հարևան շրջանների գյուղերը, որի հետևանքով ավելացել է դրանց բնակչության թիվը. օրինակ, Արագածի շրջանում գյուղական բնակչության թիվը 5,4 հազարից հասել է 12,1 հազարի, Կալինինոյինը՝ 14,1 հազարից 19,8 հազարի։

Երկրաշարժից հետո շինարարական մեծ աշխատանքներ են ծավալվել Գյումրիում և մյուս քաղաքներում ու գյուղերում։ Շոշափելի տեղաշարժեր են կատարվել նաև բնակչության ժողովրդագրության փոփոխության առումով։

Աղետի գոտու բնակչության թիվը 1991 թ. հասավ 960 հազարի, որը հասել է նախաերկրաշարժյան թվին և 253 հազարով գերազանցել հետերկրաշարժի մակարդակը. այդ թվում, 48 հազարը կազմել է բնական աճը, իսկ 205 հազարը երկրաշարժի ժամանակ հեռացած, ապա վերադարձած բնակիչներն են։ Աղետի գոտու բնական աճը 1000 բնակչի հաշվով 1989 թ. եղել է 17,8, 1991 թ.՝ 19,5 մարդ, 1987 թ. 17,1։ Ավելացել են ամուսնացողները. 1987 թ. գրանցվել է 8237, 1990 թ.՝ 8042 ամուսնություն, 1000 մարդու հաշվով համապատասխանաբար կազմել է 8,7 և 8,6 ամուսնություն։ Ուրեմն, նախաերկրաշարժի և հետերկրաշարժի ցուցանիշները իրար հավասարվել են, և աղետի գոտու բնակչության դրական տեղաշարժերը ապացուցում են, որ կյանքը բնականոն հունի մեջ է մտնում։


ՀՀ ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԹՎԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԸ
1988-1989թթ.

# ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ



# ИЗМЕНЕНИЕ ЧИСЛЕННОСТИ НАСЕЛЕНИЯ ЗОНЫ СПИТАКСКОГО ЗЕМЛЕТРЯСЕНИЯ (1988—1991)

Х. А. АВЕТИСЯН


## Резюме

Землетрясение охватило одну третью часть (11,3 тыс. км$^2$) территории Армении, где размещено 9 городов, 15 пгт и 16 административных районов с 370 населенными пунктами с общей численностью проживающего населения 957, 4 тыс. человек.

В 1991 году численность населения зоны бедствия составила 960 тыс. человек, т. е. достигла численности населения до землетрясения, на 253 тыс. превысив численность после землетрясения, в том числе 48 тыс. человек составили естественный прирост, 205 тыс. возвратилось на свое прежнее место жительства. Таким образом, по естественному росту населения и по количеству зарегистрированных браков численность достигла уровня до времени землетрясения.